

մամբ ճայթելով՝ բոլոր թաղը կը սարսեցընէ : Բայց ցնցմունքէն վրայի յարկը խախտելով՝ կը փլչի , յատակին վրայ կ'իյնայ և գործարանին ստորին յարկը բոլորովին կը կործանէ :

Բովի եղած կրպակներն ու տուններն ալ չարաչար կը փնասին այս աղէտալի հրդեհէն . և անմիջապէս մերձակայ գինետան մէջի եղած սեղանատախտակը մէդր մը հեռու կը նետուի , որուն դիմացը ոտքի վրայ արհեստաւորին մէկը գաւաթ մը զինի խմելու ատեն՝ հոն կը խանձի կը մնայ : Իսկ Պասդա այդ փլատակներուն տակ մնալով՝ զո՛հ կ'ըլլայ դժբաղդաբար իրեն արուեստին : Երկրորդ օրը կ'երթան կը գտնեն եղկելոյն դիակը , այն գործիքներուն քով ուր կ'աշխատէր առջի օրը , բոլորովին ածուխ դարձած և անկերպարան , 'ի մեծ սուգ թողլով թշուառ կին մը և հինգ զաւակ . որոնց ո՞ր գիտէ ինչ յուսով առաջուց այս նոր տարին մաղթած էր , կարծելով թէ սե մահը այսչափ անգութ չըլլար : Սիրաւորելոց մէջ կը գտուի նաև Պ. Տէմարէս Բաղդիոյ դրամատեղոյն ընկերներէն մէկը , որ գլխուն վրայ ծանր վէրք մը կ'աւնու , և վիզը՝ ուսերն ու թեւերը այրելով կը վերաւորուին . նոյնպէս թաղին օրագրապետն ու տասնըվեց տասնըեօթն հոգոյ չափ անցուորներ :

( Բէր . Թաղին վերատեսուչն այս հըրդեհին ձայնը լսելուն պէս՝ իր գրագիրն հետն առած վրայ կը հասնի , վերաւորելոց պէտք եղած օգնութիւնն ընելու համար . որոնք շուտով մօտի դեղավաճառի խանութ մը կը տարուին և մեծաւ մասամբ իւրաքանչիւր իրենց տուները . իսկ Տէմարէս՝ լա Ռիպոպատէր հիւանդանոցը կը փոխադրուի : Ե ուտ մը կրակին տեղը կը հասնի ոստիկանութեան գլխաւորն ալ և անձամբ կը հըրամայէ հարկաւոր միջոցներն 'ի գործ դնելու : Պլանշ Թաղին ջրբերներն ու Տրոպոյ , Ռիմէր և Կէլ-Ապարոպոպ կայանից հրդեհի ջրհանները մէկէն հոն կը վազեն , կարծելով թէ խիստ մեծ կրակ մը բռնկած ըլլայ : Բարիզու պահանջողը

գնդէն ալ խուճա մը զօրք կ'երթայ թաղին ապահովութեանը համար հոն սպասելու . և նոյն ճամբան ինչուան իրիկուն խափանեալ կը մնայ անցուդարձէն : Բաղինոյի գեղեցիկ սրահէն ուրիշ բան չիմնար , բայց եթէ սեցած , մրոտած քարերու կոյտեր : Բայց մէկ քանի վտանգաւոր ձեղուններ անհաստատ և առկախեալ մնացած ըլլալով , ջրհաններէն մէկ մասը հոն կը կենայ առ ժամանակ մի՛ նորահաս արկածից դարման տանելու համար : Սակայն Բաղինոյի գործատունը Բաղէրնէլ ընկերութենէ ապահովցուած ըլլալով՝ ընկերութեան տեսուչը մէյ մը զննելէն ետե եղած փնասը , որ երկու հարիւր հազար Ֆրանգէն թերևս աւելի ալ ելլէ , յայտնեց որ ընկերութիւնն առանց ուշացընելու նորէն կը շինէ գործատունը :

Յաղագս այդոյ որ նեխեցնէ զորոնէն և զպորոն : Են որ յառաջ մենակ 'ի յազարն . և է որ 'ի խաղողն , է որ 'ի խաղողին . և այդոր դեղն այս է : — Են անմեռկի ջուր և գարէփոխնդ , և խառնէ՛ ընդ յիրար , և օժէ՛ զտունկն . և թէ անմեռկի ջրով ողկոյզն այլ օժես՝ օգտէ : Եւ են որ առնուն կրակաց մոխիր և յաղբի տեղ 'ի տակքն ընուն 'ի տնկին , օգտէ՛ :

1. ԳԻՐԲ ԱՄՍՏԵԿՈՅ . գլ . Ճ : Աստուծոյ Գիրքը , որ մշակական շատ տեսակ օգտակար հրահանգներ կը բովանդակէ , կը կարծուի որ յունարէնէ և լատիններէնէ թարգմանուած ըլլայ՝ կէս ոսմիսական ուճով : Հաւանականաբար չորս հինգ հարիւր տարուան հնութիւն մը կրնայ տրուիլ սկզբնադրին . սակէ կը հետևի որ այս խաղողի հիւանդութիւնն ալ բոլորովին նոր բան մը չէ մեր դարուս , և թէ ան ատենն ալ ճար մը գտնելու կը ջանաքին :